ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Շուշանիկ ՍԱՂՅԱՆ
ԱրՊՀ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն,
բ.գ.թ., դոցենտ
E-mail: shushaniksagyan@mail.ru

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում քննվել է ստուգաբանության լայն դրվածքը՝ մշակութաբանական, հասարակական-քաղաքական, գիտական առումներով, և դրա առնչությունը մարդկային գործունեությանն ու գիտակցությանը:

Ստուգաբանության մշակութաբանական վերամշակման հանրային պահանջը բավականին մեծ է:

Համապատասխանաբար, մեծ տարածում ունի ժողովրդա-կան/կեղծ բնորոշվող ստուգաբանությունը, որի կիրառման հիմնական ասպարեզը գեղարվեստն է: Քննվել են որոշ խնդիրներ, որոնք առնչվում են ստուգաբանությունների գեղագիտական հորինվածքի և գիտական մոտեցումների հակադրությանը:

Ստուգաբանության քաղաքական առնչությունները բավականին լայն են: Արժեք ունեն լեզվի մանիպուլյացիոն գործառույթը, շահադրդված ստուգաբանությունների՝ իբրև հանրային կամ միջազգային հարթակներում բանական և հոգեբանական ազդեցության միջոցներ հանդես գալը: Հոդվածում նաև քննվում են ստուգաբանության և պատմագիտության, պատմության փիլիսոփայության առնչությունները:

Բանալի բառեր՝ *բնիմաստ, գիտական նեղ և լայն ըմբռնում, գիտական ստուգաբանություն, կեղծ ստուգաբանություն, լեզվաբանական ուսմունք, լեզվական մանիպուլյացիա, լեզվական նշան, ճարտասանական հնարք, պատմության փիլիսոփայություն, տեղանուն:*

Ш. Сагиян

ВНЕЯЗЫКОВЫЕ СООТНОШЕНИЯ ЭТИМОЛОГИИ

В статье рассматривается этимология с широкой точки зрения. Выявлены соотношения с культурологией, политикой, историографией, роль этимологии в человеческой вненаучной деятельности.

Спрос на художественную разработку этимологии довольно высок. Это с гнесеологической точки зрения- доступно, а эстетически-

приятно. В статье рассмотрены проблемы, которые возникают между научной и народной этимологией.
Этимология играет значительную роль в политике. Это относится к языковому манипулированию, мотивированным этимологизациям. Нами были рассмотрены отношения этимологии с историографией и философией истории.
Классическими образцами вышеупомянутого являются разные факты из армянской действительности.
Ключевые слова: *лингвистическая школа, мотивированная этимологизация, топонимика, этимология, народная этимология, этимон, языковой знак, языковое манипулирование, риторический трюк, философия истории*

S. Saghyan

EXTRALINGUISTIC RELATIONS OF ETYMOLOGY

The article considers the etymology in a broad sense. It has to do with culturology, politics, historiography.
In culturology, etymological data are subject to artistic processing. It is in great public demand, because is understandable (scientific etymology has a degree of complexity) and nice. We have examined a number of issues that arise in this relationship.
Etymology plays an important role in politics. It refers to linguistic manipulation, motivated etymology. We have examined the connection between etymology and historiography and philosophy of history. There are classic examples of these problems in the Armenian reality.
Keywords: *etymology, motivated etymology, popular etymology, etymon, linguistic manipulation, linguistic method, linguistic sign, philosophy of history, toponym*

Ստուգաբանությունը լեզվաբանական գիտաճյուղ է, որը քննում է բառի կամ ձևույթի ծագումը, նրա նախնական իմաստը, կազմը, գործառությունը և դրանց հետագա զարգացումը: Գիտաբառը նաև նշանակում է բուն ստուգաբանական գործընթաց, գիտամեթոդական եղանակների գործադրում:[1] Այս վերջին առումով ստուգաբանությունն իմացաբանական բնույթ ունի, որով էլ պայմանավորվում է նրա բազմատիպ հարաբերությունը մարդու մտածական գործունեությանը: Քանի որ ստուգաբանություններով նաև բացահայտվում են մարդկության պատկերացումները նյութական և հոգևոր աշխարհի վերաբերյալ, նրա նկատմամբ կա մշակութաբանական, հասարակական-քաղաքական պահանջ: Այս պարագայում ստուգաբանական գործընթացը կարող է դուրս գալ լեզվաբանական «վերահսկողությունից», մինչև անգամ կրել հանրային կամ անհատական ընկալումների կնիքը:

Լեզվաբանության մեջ առանձնացնում են *գիտական* և *կեղծ ստուգաբանություններ*: Եթե առաջինը ծառայում է գիտության շահերին և ունի բարդության որոշակի աստիճան («Բառի պատմական քննությունը երևան է բերում իմաստային բազմաթիվ անցումներ, ձևական

[1] ***Պետրոսյան Հ.,*** *Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 550 :*

փոփոխություններ և գործառական անցումներ»[1]), ապա կեղծ ստուգաբանությունը, որ անվանում են նաև *ժողովրդական, ռամկական,* ունի հանրային ծագում և շատ դեպքերում համընկալելի է: Ցայտուն օրինակներից են *հայ* բառի ծագումը Հայկ Նահապետի անվան հետ կապելը կամ Նախիջևան-ը *Նոյի առաջին, նախնական իջևան* ձևով բացատրելը: Ստուգաբանության հանրայնացումը արտալեզվաբանական ոլորտ է. նրանով մարդիկ զբաղվում են շատ վաղուց: Այս պահանջը պայմանավորված է նրանով, որ բառերի հնչույթային կազմն առաջացնում է որոշակի զուգորդումներ, նրա գոյության կամ կազմության պատճառաբանվածությունը մեծ արժեք ունի խոսքային գործառման համար: Սակայն այստեղ խնդիրն այն է, որ լեզվական նշանը բավականին ինքնատիպ է: «Եթե տեխնիկական նշանները միանշանակ են, ապա լեզվական նշանները բազմանշանակ են, արգասավոր (լեզվական մի նշան կարող է հիմք դառնալ այլ նշանի համար՝ բարդ բառեր), ունեն իմաստային պատճառաբանվածություն (բաղադրյալ կազմությունների իմաստը) և , վերջապես, ժամանակի ընթացքում կարող են ենթարկվել վերատարրալուծման ու պարզեցման»[2]: Այսպիսով՝ լեզվական նշանի ըմբռնման յուրահատկությունը ևս կարևոր գործոն է ստուգաբանության բնույթի համար:

Լինելով գիտական գործընթաց՝ ստուգաբանությունն անմիջականորեն կրում է մարդկային ճանաչողության կնիքը: Իսկ վերջինս բացարձակ ճշգրիտ բնութագրվել չի կարող, քանի որ այն, ինչ մարդու ճանաչողության զարգացման տվյալ մակարդակի համար ճշգրիտ է, կարող է այդպիսին չլինել ճանաչողության զարգացման հաջորդ աստիճանում:

Սույն հոդվածում նպատակ ունենք քննելու *ստուգաբանություն* երևույթի լայն դրվածքը և առնչությունները մարդու գործունեությանն և գիտակցությանը:

Մշակույթը ժողովրդական ստուգաբանության տվյալները (վերջինս ևս կարող է պատկերավոր մտածողության տարրերի վրա հիմնված լինել) փոխակերպում է գեղագիտական հարթակում: Ստեղծվում են ժանրային տարբեր գործեր, որոնք հանրային մեծ ազդեցություն կարող են ունենալ, քանի որ մատչելի, հետևաբար՝ պահանջված են թե՛ իմացաբանական, թե՛ գեղագիտական առումներով: Վերջինս առնչվում է արվեստավոր խոսքի հաճելիության, ուժեղ տպավորության, զարմանքի, հիացմունքի, ափսոսանքի զուգորդումներ առաջացնելու հատկություններին: «Բանիմացությամբ և ճաշակով արված համեմատությունը և նմանությունը շարժում են ունկնդրի կամ ընթերցողի միտքը, զարգացնում մտքի գործունեության մի շատ կարևոր հատկանիշ՝ դիտողականությունը, մտքի

---

[1] ***Աղայան Է.***, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 9:*

[2] ***Մկրտչյան Ռ.***, *Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992, էջ 21:*

գործողությանը տալիս ակտիվություն, սովորեցնում մտովի կապ ու ընդհանրություն տեսնել հեռավոր կամ միմյանց հետ ոչ մի ընդհանրություն չունեցող առարկաների ու երևույթների միջև»[1] : Նշվածի դասական օրինակներից է Հովհ. Թումանյանի «Ախթամար» բալլադը, որի գեղագիտական հորինվածքի վրա վերջաբանվող ճշմարտանման ստուգաբանության զգալի ազդեցությունն ենք տեսնում ոչ միայն ուսուցման ոլորտում (սովորողների համար խնդրահարույց են *Աղթամար-«Ախթամար»* ուղղագրական տարբերակումները), այլև գիտական ստուգաբանության նկատմամբ պահանջի բացակայության հարցում (հանրությանը բավարարում է գեղարվեստական ստուգաբանությունը): Այսպիսով՝ ժողովրդական ստուգաբանությունը, նրա արվեստավոր մշակումները, ունենալով հանրային պահանջ, յուրօրինակ հարաբերության մեջ են մտնում գիտական ստուգաբանության հետ: Սակայն այդ հարաբերությունն ամենևին էլ հօգուտ գիտականի չէ:

Քիչ այլ նշանակություն է ձեռք բերում ստուգաբանությունը քաղաքականության ասպարեզում: *Քաղաքականություն-ստուգաբանություն* հարաբերություն ստեղծվում է մի շարք դեպքերում: Դա այն բանի շնորհիվ է, որ ստուգաբանությունը յուրօրինակ հարթակ է, որտեղ առնչվում են լեզվաբանության և պատմագիտության տվյալները: Որպես լեզվաբանական գործընթացի միջոց և արդյունք՝ ստուգաբանությունն ունի որոշակի գործառույթներ: Դիտարկենք այդ երևույթը շահադրդված քաղաքականության պարագայում:

Հայտնի է, որ լեզուն գաղափարական ազդեցությունների, հակամարտությունների, պատերազմների հիմնական գործիքներից է, հանրային կառավարման նպատակահարմար միջոցը: Բառի նշանակության, կազմության կարծեցյալ կամ շահադրդված մեկնությունը կարող է *լեզվական մանիպուլյացիայի* օրինակ դառնալ : Նույնպես և շահադրդված ստուգաբանությունները, հայտնվելով հանրային կամ միջազգային կառավարման ռեսուրսում, բանական և հոգեբանական ազդեցության միջոցներ են դառնում: Մարդկությանը դեռևս անտիկ շրջանից են հայտնի նման երևույթները: Դասական օրինակներից են սոփեստական դպրոցի կրտսեր սերնդի կիրառած սկզբունքները, որոնցով ապացուցված է ներկայացվում չապացուցվածը, թվացյալ հիմնավորվածություն է ստեղծվում բավարար հիմքեր չունեցող եզրահանգումների համար:

Ստուգաբանության քաղաքական աղերսներն ակնհայտ են դառնում նաև այն ժամանակ, երբ պետական-քաղաքական կազմավորումն ունենում է պատմության վերանայման, վերաձևման կամ ստեղծման խնդիր: Այս պարագայում ստուգաբանությունը ևս կրում է պատմական իրադարձությունների փիլիսոփայական ընկալումների ու

---

[1] ***Պողոսյան Պ.***, *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, հ. 2, Երևան, 1991, էջ 302:*

մեկնաբանությունների կնիքը: «Պատմաբանը գործ ունի ոչ թե անցյալի իրադարձությունների հետ (քանզի դրանք արդեն գոյություն չունեն որպես այդպիսին), այլ գիտակցության հետ, որը մտածում է այդ իրադարձությունները: Պատմությունը սուբյեկտին տրված չէ ուղղակիորեն, և պատմության շարադրումը պարզ արձանագրում չէ:

Պատմության փիլիսոփայությունը ավելի շուտ աշխարհայացքի ոլորտի կազմավորում է, քան բուն պատմական հետազոտություն, ուստի բնավ կախված չէ պատմության հնարավորությունից, այլ ունի որոշակի ինքնաբավություն»[1]: Նշված հետաքրքիր դիտարկումը արտացոլում է պատմության և քաղաքականության յուրօրինակ կապերը:

Շահադրդված քաղաքականության մեջ թե՛ պատմության փիլիսոփայությունը, թե՛ ստուգաբանական կեղծ մեկնաբանումները դառնում են ճարտասանական ուժեղ հնարքներ: Ակնառու օրինակներից է 2020թ. փետրվարի 15-ին Մյունխենում *Փաշինյան-Ալիև* հանդիպման ժամանակ Ադրբեջանի նախագահի կողմից *Խանքենդի* հատկանվան ճշմարտանման/ մակերեսային ստուգաբանությամբ միջազգային հանրության համար համոզիչ պատկեր ստեղծելը: Ի դեպ, նշված տեղանվան ստուգաբանության տարբերակ է առաջադրել ԱՀ հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության պետ Ս. Սարգսյանը: Ըստ նրա՝ բառը հայկական *Հանիշեն*-ի օտարահունչ անվանումն է. «Բնականաբար, «Խանքենդի» (Խանիշեն) անվանումը ձևախեղված լինելով, տեղիք է տալիս շահարկումների՝ տեղանվանումն արձանագրելու և համադրելու «խան» (տիրակալ) հասկացության հետ, ինչպես բազմիցս արվում է հարևան հանրապետությունում»[2]:

Նշված խնդիրներին (ստուգաբանության քաղաքականացումը, կեղծ ստուգաբանություններն իբրև մոլորեցնող հնարք կիրառելը) հակադարձում է գիտական ստուգաբանությունը, որը նույնպես հարաբերակցության սերտ եզրեր ունի պատմագիտության հետ: Բացի այն, որ առնչակից են էթնոսի և նրա լեզվի պատմությունները, կան բառերի թեմատիկ խմբեր, որոնք ունեն պատմագիտական, առանձնապես քաղաքական հատուկ նշանակություն: Դրանք էթնիկ անուններն են, տեղանունները, որոնցով կառուցվում է յուրաքանչյուր էթնոսի պատմություն: «Էթնիկական անունները իրենց բնույթով նման են հատուկ անուններին՝ փաստորեն հանդես գալով որպես այս կամ այն ժողովրդի, ցեղի, տոհմի հատուկ անուն: Այս առումով նրանց ստուգաբանության ճշգրտությունը հեշտ չէ ապահովել: Սովորական հասարակ անվան դեպքում մենք գործ ունենք որոշակի իմաստի հետ, և ստուգաբանության դեպքում հնչյունական համապատասխանությունն ստուգվում է

---

[1] ***Մոսինյան Դ.***, *«Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցերը», «ՎԷՄ», N4(60), 2017, էջ 16:*

[2] ***Սարգսյան Ս.***, *Արցախի բնակավայրերը, Երևան, 2018, էջ 22:*

իմաստային համապատասխանությամբ. եթե բացահայտվում են տվյալ լեզվին հատուկ հնչյունական օրենքներ, և գոհացուցիչ կերպով մեկնաբանվում են իմաստային անցումները, ապա ստուգաբանությունն ընդհանուր առմամբ ընդունելի է: Հատուկ անունների դեպքում մենք հաճախ գործ ունենք մթագնած իմաստների հետ, և ճիշտ ստուգաբանության համար հարկավոր է բազմաթիվ իմաստների միջև ընտրություն կատարել: Այս պատճառով էլ հատուկ անունների ստուգաբանությունը, մանավանդ հետազոտողի անզգուշության դեպքում, հնարավորություն է տալիս ամեն տիպի կամայական մեկնաբանությունների»[1]: «Ժողովուրդների անվանումները կարող են կապված լինել ամենատարբեր իմաստների հետ և նշանակել մարդկային ֆիզիկական ու բարոյական հատկություններ, արտադրական գործունեության տարբեր բնագավառներ, աշխարհագրական օբյեկտներ, դիցաբանական և կրոնական հասկացություններ, կենդանիներ (որպես տոտեմներ) և այլն, և այլն: Հարցը բարդանում է նաև այն պատճառով, որ էթնիկական անունը կարող է կապված լինել որևէ հատուկ՝ անձի կամ վայրի անվան հետ, և այս դեպքում հանդես են գալիս միջնորդված իմաստներ»[2]:

Պատմագիտական ստուգաբանություններում պատմական իրադարձությունները հանդես են գալիս որպես ստուգաբանությունը հաստատող դրույթներ: Սրանով տարբերվում է ստուգաբանությունների *պատմագիտական* և *լեզվաբանական* տրամաբանությունը: Բացի նշվածից, գիտական ստուգաբանությունն ունի այն խնդիրը, որ հետազոտության եղանակների ընտրության, կիրառման գործընթացը սերտորեն կապված է գիտական լայն և նեղ ըմբռնումների, ժամանակաշրջանի լեզվաբանական տիրապետող ուսմունքի, լեզվաքաղաքականության հետ, ուստի այս բնագավառում ևս կա հայեցակետերի հստակեցման, վերանայման անընդհատական գործընթաց: Հայկական ավանդական ստուգաբանությունը սահմանում է բնագավառի համապարփակ էությունը. «Բառիմաստի փոփոխությունները պայմանավորվում են ոչ միայն ճանաչողության զարգացմամբ. իրական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, մշակույթի զարգացումը, կենցաղի ու սովորությունների, գաղափարախոսության, քաղաքական կյանքի փոփոխությունները, սուբյեկտիվ պատկերացումները, մարդու հոգեկան գործունեության հետ կապված զանազան հանգամանքները, տնտեսական ու քաղաքական հարաբերություններն ու դրանց պատմական փոփոխությունները և այլն, և այլն,- բառիմաստի փոփոխություններ առաջացնող գործոններ են, և գիտական ստուգաբանությունը պետք է

---

[1] ***Ջահուկյան Գ.***, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 280:*

[2] *Ն.տ., էջ 280:*

հաշվի առնի այդ բոլոր հանգամանքներն ու դրանց առաջ բերած իմաստափոխությունները: Իսկ սրա համար անհրաժեշտ է շատ հաճախ մտովին փոխադրվել նախապատմական դարաշրջանները, բառիմաստի մասին դատողություններ անել հնադարյան մարդու պատկերացումների համաձայն, նյութական կուլտուրայի պատմության տվյալների հաշվառումով, ներլեզվական ու արտալեզվական իրողությունների ընձեռած տվյալների գիտական քննություններով »[1]:

Այսպիսով, նշվածը ևս ներկայացնում է ստուգաբանության համապարփակ էությունը, արտալեզվաբանական հարաբերումների լայն սահմանները: Խնդրահարույց է նաև այն հարցը, որ գիտական ճշտումներն ու վերանայումները սահմանափակվում են գիտության ասպարեզում, հանրայնացման ենթարկվում են դանդաղ ու մասնակի: Հաշվի առնելով այն փաստը, որ ստուգաբանությունը կարող է քաղաքական մեծ արժեք ունենալ, կարևորվում է նրա հանրայնացման մեխանիզմների զարգացումը: Այն խոչընդոտող հանգամանքներից են՝ գիտական ստուգաբանությունների բարդության որոշակի աստիճանը, ստուգաբանական տարբերակների գոյությունը: Վերջինս կարծեք թուլացնում է կուռ սկզբունքների գոյությունը: Հարցն այն է, որ մարդիկ առարկաներին անուններ են տալիս՝ նկատի ունենալով որևէ հատկանիշ, հատկապես այն, որը տվյալ խոսող հանրության համար «աչքի զարնող» է կամ գիտակցվում է իբրև այդպիսին: Այս գործոնը ցայտուն է հատկապես տեղանունների պարագայում: Տեղանվանակոչությունը հնագույն իրողություն է: Մասնագետներն այս բնագավառում առանձնացնում են տեղանքի *նկարագրական, գործառույթային հատկանիշների, ցեղանվան հիմքերի վրա* անվանակոչություն: Որևէ մեկի ճիշտ լինելը , հնարավոր է, մտածական լինի: Դասական օրինակներից է *Ղարաբաղ* անվան ստուգաբանությունը: Այն ներկայանում է *սև այգի-մեծ այգի-թանձրախիտ այգի-բաղ(բալերի ցեղանուն) ցեղ- բալայինների ցեղ- կար՝ հույժ, պետքական, բաց՝մաս- կար՝քար, լեռ, բաց՝սուրբ*[2] տարբերակներով:

Այսպիսով՝ ստուգաբանությունը մարդու մտածական լայն գործունեության բնագավառ է ներկայացնում: Նրա արտալեզվաբանական հարաբերումների դասական ասպարեզ է հայկական իրականությունը: Օրինակ՝ արցախյան խնդիրը, որ գոյություն ունի ոչ միայն ռազմական, քաղաքական ոլորտներում, հայ-թուրք-ադրբեջանական գաղափարական հակամարտության հարթակում իրացվում է նաև թուրքացված ստուգաբանությունների շահարկման ձևով: Թուրքացված ստուգաբանությունների խնդիրը արձանագրված է լեզվաբանական, գիտահանրամատչելի գրականության մեջ (19-րդ, 20-րդ դդ.)՝ որպես պարսկական բաղադրությունների փոխակերպման, բանահյուսական

---

[1] ***Աղայան Է.***, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 10:*

[2] *Տե՛ս* ***Սարգսյան Ս.***, *Արցախի բնակավայրերը, էջ 17-19:*

նյութերի հիմքի վրա վերանվանման, հայկական բառերի թուրքական ընկալման [1] երևույթ: Սակայն նման մեկնաբանությունները գիտության մեջ կեղծ որակվելուց բացի գործնական հակադարձումների չեն ենթարկվել: Արդյունքում՝ թուրք-ադրբեջանական կողմը ստուգաբանական մանիպուլյացիան կարողացել է հասցնել պետական-քաղաքական մակարդակի: Ասվածը վկայում է, որ ստուգաբանությունն արդիական դրվածք ունի, և դա ոչ միայն լեզվաքաղաքականությանն է առնչվում, այլև պետական քաղաքականությանը, վարքագծին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974:
2. Միրզոյան Վ., Ճարտասանություն, Եր., 2004:
3. Մկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1992:
4. Մոսինյան Դ., «Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցերը», «ՎԷմ», N4(60), 2017:
5. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
6. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, հ. 2, Երևան, 1991
7. Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, Երևան, 2018:
8. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Հ. Ս. Ղազարյանը:

[1] *Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, էջ 399, **Վարդանյան Ա.**, «Նախիջևան տեղանվան ստուգաբանության շուրջ», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, էջ 368:*